ցաւ ձուկն տեղւոյն, եւ եղեւ իբրեւ զլեղի դառն մինչեւ ցայսաւր ժամանակի. եւ ոչ ոք որսաց զնա մինչեւ ցայսաւր ժամանակի: *10* Բազում եւ այլ զաւրութիւնս առնէր եւ նշանս անչափս:

11 Իբրեւ բազում կարգս ուղղութեան թողոյր ի գաւառսն յայնոսիկ սուրբն Եպիփան, իսկ նա էառ ընդ իւր զաշակերտսն իւր արս միանձունս լեառնականս անապատականս, արս հինգ հարիւր, երթալ գնալ յերկիրն Յունաց: *12* Եւ մինչ դեռ երթային, ի ճանապարհին դիպեցաւ նոցա կին մի. իբրեւ անցին ընդ կինն, սկսաւ փորձել զնոսա Եպիփան, ասէ. Իբրեւ[1] զի՛ գեղեցիկ էր կինն եւ վայելուչ: *13* Ասէ մանուկ մի յաշակերտաց անտի. Կինն, զոր դու գովեցեր, միականի էր: *14* Եւ ասէ սուրբն Եպիփան. Դու բնաւ ընդէ՞ր նայեցար տեսանել զերեսս նորա. տեսանե՞ս զի խորհուրդք չարք կան ի քեզ: *15* Եւ անդէն մեկնեաց զմանուկն յիւրմէ, եւ հալածեաց զնա: *16* Եւ ինքն չոգաւ եմուտ ի ծով մեծ, եւ նաւաւք անցին յանապատ ի կղզիս. եւ ունէր զկղզին զայն աւձից բազմութիւնք, եւ էին յայնմ կղզւոջ բնակեալ աւձք իժք եւ քարբք, բազում գազանք դաժանք թունաւորք: *17* Եւ եղեւ իբրեւ չոգան, եհաս սուրբն Եպիփան ի կղզին յայն, մերժեցան անտի գազանքն, եւ թողին զկղզին եւ գնացին[2]: *18* Եւ այնուհետեւ ոչ ինչ վնաս եղեւ նոցա ի կղզւոջն յայնմիկ, այլ բնակեցան անդ խաղաղութեամբ: *19* Անդ եկեաց սուրբն Եպիփան, անդէն ի նմին կղզւոջ հանգեաւ:

ԳԼՈՒԽ ԻԸ.

1 Յաղագս մեծամեծ նշանացն եւ սքանչելեացն, որ երեւեցաւ յԱստուծոյ ի Մամբրէ յետ գնալոյն Եպիփանու:

2 Ապա իբրեւ գնայր սուրբն Եպիփան ի գաւառէն Ծոփաց յիւրմէ միանձնանոցէն՝ որ անուանեալ կոչի Մամբրէ[3], եթող անդ բազում եղբարս միաբանս միահաւանս հաւատացեալս կրաւնաւորս քրիստոնէիցն, լեառնականս ճգնաւորս միանձունս. եւ ի վերայ նոցա երէց մի գլխաւոր: *3* Բայց էին ի նոցանէ ոմանք, որ բնաւ ամենեւին այլ ինչ կերակուր չէր ճաշակեալ նոցա ի մանկութենէ իւրեանց, բայց լոկ բանջար եւ ջուր. եւ զհամ գինւոյ գիտէին ոչ զիարդ լինի[4]:

4 Եւ էր անդ եղբայր մի խստակրաւն, որ մթին վարս վարէր. եւ ոչ ճաշակէր ամենեւին ի բաժակէն կենարար փրկութեանն յուսոյն յարութեանն, այս ինքն յարենէն Տեառն մերոյ Յիսուս Քրիստոսի: *5* Զի ոչ կարէր հաւատալ՝ թէ

1 *Օրինակ մի՝* վաշ զի գեղեցիկ

2 *Յօրինակի միում՝* եւ աղօթիւք հալածեաց զամենայն, եւ ոչ մի երեւէր. այլ բնակեցան անդ խաղաղութեամբ. եւ եկաց ի նմին կղզւոջ եւ հանգեաւ ի Քրիստոս

3 *Օրինակ մի՝* յիւրմէ խցէ, եթող անդ բազում եղբարս

4 *Օրինակ մի չունի՝* եւ զհամ գինւոյ գիտէին ոչ զիարդ լինի